ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | **Բնագրի շուրջ աշխատանքի փուլերը և մեթոդական քայլաշարը** |
| ԱՌԱՐԿԱ | **Մայրենի** |
| ՀԵՂԻՆԱԿ | **Անի Սպարտակի Կարապետյան** |
| ՄԱՐԶ | **Արագածոտն, գ. Վարդենուտ ( Ապարան համայնք )** |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | **Վարդենուտի միջն. դպրոց** |
| ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ | **Մալխասյան Լիլիթ** |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կարդացած ստեղծագործության շուրջ աշխատաքի փուլերը և մեթոդական քայլաշարը……5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում տարբեր ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները.....9

Հարցախույզի արդյունքների վերլուծություն……25

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....29

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....30

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի>>: (Ջ. Ադիսոն)

<<Խոսքը մարդկային ուժի զորավարն է>>: (Վ. Մայակովսկի)

Հանրակրթության վերակառուցման արդի շրջանում հաղորդակցական կարողությունները և ընդհանրապես խոսքի զարգացումը դիտարկվում է որպես առաջնային կարևորություն ունեցող խնդիր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խոսքի տիրապետման լավագույն հասակը կրտսեր դպրոցական տարիքն է: Տարրական դասարաններում աշակերտների խոսքի ու մտածողության զարգացմանը մեծապես նպաստում են մայրենիի դասաժամերին դասավանդված ստեղծագործությունները:

***Թեմայի արդիականությունը*** պայմանավորված է սովորողների մտածողության, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ և մայրենիի դասերին դրանք ժամանակակից մոտեցումներով նպատակաուղղված և համակարգված զարգացնելու դժվարություններով:

***Ուսումնասիրության առարկան*** բնագրի ուսումնասիրման ժամանակակից տեխնոլոգիաներն են տարրական դպրոցում:

***Ուսումնասիրության նպատակը*** տարրական դպրոցում ուսումնասիրվող բնագրերի արդյունավետ ուսումնասիրման ժամանակակից տեխնոլոգիաների համակարգի և մեթոդական ցուցումների մշակումն է:

***Ուսումնասիրման խնդիրները***

Մեր առջև դրված նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն և վերլուծել հիմնական դրույթները:

2. Ուսումնասիրել տարրական դպրոցի մայրենիի առարկայական, չափորոշիչը, ծրագրերը և դասագրքերը՝ կրտսեր դպրոցականների մտածողության, համագործակցական, հաղորդակցական և ստեղծագործական կարողությունների զարգացման հնարավորությունների տեսանկյունից:
3. Իրականացնել մայրենիի դասերի դիտարկումներ և հարցախույզ՝ բնագրի շուրջ աշխատանքի համալիր գործընթացը բացահայտելու նպատակով:
4. Մշակել բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների վերլուծական և համադրական մտածողության, համագործակցային, հաղորդակցական և ստեղծագործական կարողությունների զարգացման համակարգ և մեթոդական ցուցումներ:

***Ուսումնասիրության մեթոդները:***

Ուսումնասիրության տարբեր փուլերում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- գրականության ուսումնասիրում և թեմային առնչվող դրույթների վերլուծություն,
- դասերի դիտարկում և վերլուծություն հիմնախնդրի տեսանկյունից,
- հարցախույզ ուսուցիչների և սովորողների շրջանում, արդյունքների վերլուծություն,
- դասերի նախագծում, վարում և վերլուծություն,
- ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն:

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

## Կարդացած ստեղծագործության շուրջ աշխատանքի փուլերը և մեթոդական քայլաշարը

Կարդացած ստեղծագործությունը՝ բնագիրը, մեկ ընդհանուր թեմայի գաղափարի, հեղինակային մտահաղացման շուրջ մի քանի կամ բավականին շատ և որոշակի հաջորդականությամբ շարադրված նախադասությունների խումբն է: Տեքստերը լինում են գրական (գեղարվեստական) և ոչ գրական (փաստավավերագրական): Գեղարվեստական տեքստերը լինում են պատմողական, նկարագրական, դատողական և գնահատողական:

Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների, զարգացնող տեխնոլոգիաների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է, որի բաղադրամասերնեն՝






***Բնագրի ընթերցում***: Մայրենիի ուսուցման կարևոր նպատակներից մեկը Մ. Նալբանդյանը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտելիքների հայթայթման, բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի ընդլայնման միջոց: «Կարդալը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ վարժվելը հաջող ագյուտ է անում նրան, իսկ գրելը սովորեցնում է ճշգրտություն»,- ասում է Նալբանդյանը: [1, էջ 111]:

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Լավ կարդալը կարդալու կարողության բարձր մակարդակն է: Հանրակրթական պետական չափորոշչով և ծրագրով սկսած առաջին դասարանի հետայբբենական շրջանից, բավականին ժամեր են տրամադրված ընթերցանությանը, ընթերցածը հասկանալուն և դասարանից դասարան կարդալու հետ կապված գործողությունները էլ ավելի կատարելագործելուն: Ուստի բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում կարդալը համարվում է առաջնային:

Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում ընթերցանության համար նախատեսված յուրաքանչյուր նյութի շուրջ պիտի իրականացվի համակարգված և նպատակաուղղված աշխատանք:

Այդ գործընթացի յուրաքանչյուր փուլ ունի որոշակի քայլաշար:

1. ***Աշխատանք բնագրի շուրջ մինչ ընթերցումը:*** Այս փուլի նպատակն է վերնագրի, նկարազարդման և հենակետային բառերի միջոցով զարգացնել տեքստի բովանդակությունը կանխագուշակելու կարողությունը:

Աշակերտները նախ լուռ, ապա բարձրաձայն, կարդում են տեքստի հենակետային բառերը, որոնք ուսուցիչն ընտրել և նախապես գրել է գրատախտակին: Ճշտում ենք իրենց նախնական տպավորությունները, ենթադրությունները ստեղծագործության թեմայի, հերոսների և գործողությունների զարգացման շուրջ:

Օրինակ՝ երրորդ դասարանում Եզոպոսի «Հնարամիտը» ստեղծագործությունը մինչ ընթերցելը կարելի է ներկայացնել այսպես.նախ՝ կարելի է զրուցել բառի ուղիղ և փոխաբերական իմաստների մասին, գրատախտակին գրել *բերանը ջուր առնել, մաղով ջուր կրել, ջուրը ծնկներից լինել* արտահայտությունները և երկխոսության միջոցով բացատրել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Այնուհետև կատարել



*բերանը ջուր առնել* | *մաղով ջուր կրել* | *ջուրը ծնկներից լինել*

աշխատանք վերնագրի շուրջ, որի ժամանակ ակտիվ դերում պետք է լինեն երեխաները և քայլերով փորձեն բացատրել, թե ինչ է նշանակում հնարամիտ:

Նախապատրաստական զրույցը համընկնում է քննադատական մտածողության զարգացմանը նախապատրաստող ԽԻԿ համակարգի երեք փուլերից առաջինին՝ խթանման փուլին: Խթանվում են սովորողների արդեն առկա գիտելիքները տրված թեմայի շուրջ… նախապես ստացված գիտելիքներն ավելի են ճշգրտվում և դառնում խորությամբ իմաստավորված:

Ստեղծագործության ընթերցումից առաջ զրույցի անհրաժեշտության մասին նշել է նաև Խ. Աբովյանը: Նա զրույցի միջոցով առաջարկում է լուծել երկու խնդիր: Առաջինը՝ ընթերցողին նախապատրաստել ստեղծագործության գաղափարի ընկալմանը՝ «…բանալ զմիտս աշակերտների», և երկրորդը՝ ստեղծագործության բովանդակության ըմբռնման համար իմաստավորել երեխաների կենսափորձը:

***2. Աշխատանք բնագրի շուրջ ընթերցման ժամանակ:*** Այս փուլի նպատակն է ընկալել տեքստի բովանդակությունը: Երկրորդ փուլը ստեղծագործության հետ սկզբնական ծանոթությունն է: Տեքստին ծանոթանալու եղանակի ընտրությունը հիմնականում պայմանավորված է տեքստի առանձնահատկություններով, աշակերտների տարիքային և անհատական հնարավորություններով, ընթերցողական կարողություններով: Ցանկալի է, որ բոլոր դեպքերում աշակերտները ինքնուրույն ծանոթանան ստեղծագործությանը:Տեքստին ծանոթանալու եղանակներից առավել նախընտրելիեն աշակերտների բարձրաձայն ընթերցանությունը՝ ամբողջական բովանդակային հատվածներով, լուռ ընթերցանություն, մեկնողական ընթերցանություն, երբ առավել բարդություն ներկայացնող հատվածներն ընթերցում է ուսուցիչը: «Հնարամիտը» ստեղծագործության դեպքում կարելի է տեքստը բաժանել երկու հատվածի և յուրաքանչյուր հատվածի համար նախապատրաստել հարցեր, օրինակ՝ Ի՞նչ խոստում տվեց Քսանթոսը և դա ինչ հետևանք ունեցավ: Ամեն մի հատվածի համար կարող ենք մշակել ուղղորդող հարցեր: Տարրական դասարանների աշակերտների մեջ կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորումը խիստ բազմաբնույթ ու համակողմանի աշխատանք է, որն ընդգրկում է լեզվի ուսուցման գրեթե բոլոր բնագավառները՝ և՛ ընթերցանության դասերին սովորած բառերն ու

արտահայտությունները, և՛ լեզվական նյութի ու ուղղագրության ընթացքում յուրացրած կանոններն իրենց արտացոլումը գտնում են կապակցված խոսքի մեջ:

Բառային աշխատանքն ունի իրականացման փուլեր՝բառերի բացատրում, հոմանիշների, հականիշների հայտնաբերում, խոսքի մեջ այդ բառերի օգտագործում: Այս փուլում կարող ենք խթանել աշակերտների իմքնուրույն աշխատելու կարողությունը. քանի որ դասագրքի համապատասխան էջում տրված է անծանոթ բառերի բացատրությունը, ապա աշակերտները իրենք պետք է գտնեն տվյալ բառը, կարդան, բացատրեն, ասեն հոմանիշներ և հականիշներ և կազմեն նախադասություններ, որպեսզի այդ բառը աստիճանաբար մտնի իրենց ակտիվ բառապաշարի մեջ:

Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, Մայրենի 4 դասագիրք (էջ 114, 125):




Բնագրում հանդիպում են նաև բառեր, որոնք աշակերտներին ծանոթ են նախկինում ուսումնասիրած ստեղծագործություններից, սակայն դեռևս ակտիվ բառապաշար չեն մտել: Աշակերտի բառապաշարը հարստացնելու և լեզուն գեղեցկացնելու համար պետք է նախ՝ միտքը հարստացնել համապատասխան ընկալումներով ու պատկերացումներով:

***3. Աշխատանք բնագրի շուրջ ընթերցումից հետո.***

Այս փուլի նպատակն է զարգացնել աշակերտների վերլուծական-համադրական ունակությունը, քննադատական մտածողությունը և կապակցված խոսքը: Արդյունքը

պետք է լինի հեղինակի մտադրության վերհանումը, որը թաքնված է ենթատեքստում: Այս փուլում կարելի է կիրառել բազմաթիվ մեթոդներ՝ քառաբաժան, ԳՈՒՍ, աշխատանք ուսումնական կենտրոններում և այլն:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

### Տարրական դասարաններում տարբեր ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները

Տարրական դասարաններում մայրենի լեզվի դասագրքերում տեղ գտած բնագրերը իրենց բովանդակությամբ, ձևով, հետապնդած կրթական և դաստիարակչական խնդիրներով, ինչպես նաև դասավանդման մեթոդական առանձնահատկություններով տարբերվում են միմյանցից: Դրանց միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև դրանք հանդիսանում են տեղեկատվության աղբյուր՝ Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, ազգային սովորությունների, մշակույթի մասին, ինչպես նաև գրական գեղարվեստական ճաշակի և լեզվամտածողության ձևավորման կարևոր միջոց են:

Մայրենիի դասագրքերում ներառված գեղարվեստական ստեղծագործությունների արդյունավետ ուսումնասիրումը պայմանավորված մի քանի առանձնահատկությունների հաշվառումով:Մայրենիի դասաժամերին ավանդվում են պատմվածքներ, հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ:Սովորողի խոսքի և մտածողության զարգացման համար հատկապես **պատմվածքի** ուսուցումը ունի անփոխարինելի դեր և նշանակություն:

Գրականագիտության մեջ գոյություն ունեն պատմվածքի տեսակավորման տարաբնույթ մոտեցումներ՝ համաձայն որոնց էլ պատմվածքները բաժանվում են ըստ թեմաների՝ բնության, երեխաների, կենդանիների մասին, օրինակ՝ «Տերևաթափ» (Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան և ուրիշներ, Մայրենի 3, Երևան, 2017թ.), «Կաթիլը», «Անտառի

բնակիչները» (Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան և ուրիշներ, Մայրենի 3, Երևան 2017), «Թումանյանի արձանի մոտ» (Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան և ուրիշներ, Մայրենի 4, Երևան, 2009թ.) ըստ կառուցվածքի բարդության աստիճանի՝ պատմություն բաց թողած հատվածներով, ընդարձակ, թաքնված իմաստով, օրինակ «Կաղինը», «Օջախի հիմքը», «Չնվաճված աշխարհամաս» (Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան և ուրիշներ, Մայրենի 4, Երևան, 2014թ.) և այլն:

Պատմվածքի ընթերցման և նրա շուրջ իրականացվող աշխատանքի մեթոդական շղթան շահեկան է իրականացնել ԽԻԿ համակարգով:Ուսումնասիրման ենթակա պատմվածքի ունկնդրմանը հոգեբանորեն տրամադրվելու, նրա թեմայի մեջ թափանցելու, հիմնական մտքի ընկալմանը հող նախապատրաստելու համար անհրաժեշտ է խթանման փուլը սկսել **նախապատրաստական զրույցով** կամ հարցազրույցով: Իբրև խթանում կարելի է կազմակերպել էքսկուրսիա, որևէ պատկերասահիկի դիտում և մեկնաբանում: Պետք է նշել, որ աշակերտներին դուր են գալիս նաև փոխներգործուն մեթոդական հնարները, որոնք ոչ միայն խթանում են նոր նյութի ըմբռնումը, այլև ստեղծում են ստեղծագործական–որոնողական մթնոլորտ՝ «աշխատեցնելով» սովորողների մտածողության բազմաբնույթ տեսակները:

Հաջորդ քայլով իրականացվում է բնագրի ամբողջական ընթերցումը: Բնագրի ընթերցումը նպաստում է աշակերտի կանոնակարգված և գրագետ խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանն ու աշխարհայացքի ձևավորմանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ բնագիրն առաջին անգամ ընթերցվի ուսուցչի, իսկ կրտսեր դպրոցի բարձր դասարաններում ՝ լավ կարդացող աշակերտների կողմից, ինչը գրագետ և արտահայտիչ ընթերցման օրինակ կծառայի մյուս աշակերտների

համար: Հաջորդիվ իրականացվում է բնագրի ընթերցում մասերով՝ աշակերտների կողմից, իսկ ուսուցիչն հանդես է գալիս որպես կազմակերպիչ, օգնական ու գործընկեր:

Պետք է նշել, որ հենց այս փուլում է իրականացվում բառային աշխատանքը, ինչը ենթադրում է պատմվածքում հանդիպած անծանոթ բառերի բացատրություն, դարձվածքների, թևավոր խոսքերի, փոխաբերությունների մեկնաբանում:

Հատված առ հատված ընթերցելուց հետո կատարվում է աշխատանք բնագրի շուրջ, որի ժամանակ տարատեսակ զրույցների միջոցով աշակերտները ոչ միայն ըմբռնում են պատմվածքի մեջ նկարագրված դեպքերի տրամաբանությունն ու հաջորդականությունը, այլև հասկանում են կարդացածը, իմաստավորում, կատարում են պարզ դիտարկումներ, մեկնաբանություններ, համեմատություններ, ընդհանրացումներ: Ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները հասկանում են կերպարների հույզերը, զգացմունքները, հեղինակի վերաբերմունքը գործող անձանց նկատմամբ:

Պատմվածքն ուսումնասիրելիս շատ կարևոր փուլ է աշակերտների նախապատրաստումը բնագրի վերարտադրմանը: Ամեն ինչ պետք է անել, որ երեխաները բնագիրը վերարտադրեն հասկանալով, այսինքն պատմեն, այլ ոչ թե անգիր անեն: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտի մեջ զարգացնել վերլուծելու, համադրելու, և դատողություններ անելու կարողություններ և հմտություններ: Պատմելը իրականացվում է նախապես կազմված հարցաշարի և հենակետային բառերի օգնությամբ:

Պատմվածքի ուսուցման մեթոդական շղթայի վերջին քայլը ամփոփումն է, որի ժամանակ է իրականացվում պատմվածքի հիմնական մտքի, ենթատեքստի, նրա արժեքային կողմի վերլուծությունը, բարոյակրթական և լեզվական հիմնական արժեքների բացահայտումը և կարևորվում է երեխաների խոսքը, դատողություններ անելու ցանկությունները: Միաժամանակ ուսուցիչը կասրող է լրացուցիչ տեղեկություններ հաղորդել ինչպես ընթերցած ստեղծագործության թեմայից, այնպես էլ հեղինակի մասին:

**Հեքիաթը** հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Այդ հարուստ և բազմազան նյութը ցույց է տալիս տարբեր ժողովուրդների բանահյուսությունների նմանությունները և

համընկնումները՝ միաժամանակ զարմացնելով բովանդակության և լեզվի յուրահատկությամբ:

Հեքիաթի դասավանդումն իրականացվում է չորս քայլով[1 էջ 193].

1. Հեքիաթի ընթերցում բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. Հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,
3. Հեքիաթի բարոյախոսական իմաստի (դաստիարակչական արժեքի) վերհանում,

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների ընթացքում պիտի կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը:Հաջորդ խնդիրը, որը պիտի անպայման կարևորվի հեքիաթի ուսուցման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է:

**Առակը** ուսուցողական, բարոյախրատական, դաստիարակչական բնույթի փոքրածավալ գրական-գեղարվեստական ստեղծագործություն է: Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի մայրենիի դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն: Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը («Ճայը և սագը», Մխ. Գոշ), Աստծո ամենազորությունը («Մարդը, ընկույզը և ձմերուկը» Վ. Այգեկցի), միասնականության ուժը («Անտառն ու քամին», Հր. Սևոյան)և այլն:

Առակներն ուսումնասիրվում են գեղարվեստական ստեղծագործությունների համար ընդունված մեթոդական շղթայով, սակայն կան որոշ առանձնահատկություններ.

1. Նպատակահարմար չէ աշակերտներին անմիջաբար «հրամցնել» առակի այլաբանական և փոխաբերական իմաստները. սովորողն ինքը պետք է բացահայտի և վերլուծի առակի բարոյախրատական ուղղվածությունը, հասկանա, թե առակի մեջ որն է իրականը, որը՝ երևակայականը:
2. Բարոյախրատական իմաստի բացահայտումից հետո ցանկալի է համապատասխան խորհուրդ ունեցող առածների և ասացվածքների միջոցով ամրակայել սովորողների գիտելիքները:
3. Առակը դերերով կարդալիս դերի ընտրությունը թողնել երեխաներին:
4. Հարկավոր է ոչ միայն դերերով կարդալ առակը, այլև բեմականացնել նրա բովանդակային հատվածները:
5. Առակի չի կարելի պատմել, քանի որ նրա լեզուն և ոճն անկրկնելի են, ոչ առօրեական. Երեխաները չեն կարող պատմելիս պահպանել կամ օգտագործել դրանք անգամ մասամբ, և կկորչի, կանհետանա ստեղծագործության «համն ու հոտը»: [1 էջ 199]

Առակի ուսումնասիրման մեթոդական շղթան հետևյալն է.

Դասալսումների ժամանակ ներկա եմ եղել նաև առակի ուսուցման դասի, որի թեման էր՝ «Խոզն ու ագռավը», աշակերտները բավականին հաճույքով են սովորում և մեկնաբանում առակները: Դասի ընթացքում կիրառվեց մտագրոհի մեթոդը, հարց ու պատասխանի մեթոդը, որոնք էլ ավելի ոգևորեցին աշակերտներին:

Մայրենիի դասագրքերում որոշակի տեղ է տրված **բանաստեղծություններին,** որոնք, ըստ ժանրային առանձնահատկությունների, լինում են էպիկական և

քնարական:Էպիկական բանաստեղծությունները ավելի մատչելի են կրտսեր դպրոցականներին, որովհետև ունեն դիպաշար, նրանցում նկարագրվում են դեպքեր, գործողություններ, կան գործող անձեր, որոնք հարաբերվում են, դատողություններ անում և այլն: Էպիկական բանաստեղծության շուրջ իրականացվող աշխատանքների ժամանակ շահեկան է օգտագործել տարաբնույթ զննական միջոցներ, թեմատիկ նկարների համալիր, գունանկարներ, երեխաների նկարչական, ապլիկացիոն աշխատանքները, բեմականացումներ՝ երեխաների պատրաստած բեմական կահավորանքով և այլն:

Բանաստեղծության ուսումնասիրման դասի մեթոդական շղթան հետևյալն է.




Ջ. Գյուլամիրյանը գրում է. «Սովորեցնել հասկանալ տեքստը՝ նշանակում է զարգացնել երեխայի՝ խորհելով ընթերցելու ունակությունները, որոնք ապահովում են գեղարվեստական ստեղծագործության լեզվի յուրացման «բանալիները» [1, էջ 104]: Ընթերցանության դասերին ընկալել սովորեցնելը ուսուցչի հիմնական խնդիրն է:

Բնագրի բովանդակությունն ընկալելու կարողությունների ձևավորման և զարգացման շուրջ աշխատանքը կազմակերպվում է որոշակի հաջորդականությամբ:

Պահպանելով այս մեթոդական շղթան՝ դաս անցկացրեցինք երրորդ դասարանում: Դասի թեման էր՝ Հովհ. Թումանյանի «Գետակը» բանաստեղծությունը, որի ժամանակ աշակերտները պատրաստեցին նկարաշարեր՝ նկարներով ներկայացնելով բանաստեղծության բովանդակությունը և դրանց հիման վերա նախ՝ վերլուծեցի հետո՝ անգիր արտասանեցին բանաստեղծությունը:



Պահպանելով բանաստեղծության ուսումնասիրման մեթոդական շղթան՝հասանք նրան, որ սովորողները ոչ միայն կարդացին և անգիր արտասանեցին բանաստեղծությունը, այլև վերլուծեցին և ստեղծագործաբար ներկայացրին իրենց մտքերը գարնան, բնության, ջրի դերի և նշանակության մասին:

Գեղարվեստական տեքստի ընկալման գործընթացի դժվարությունները հաղթահարելու համար մեթոդիստների կողմից առաջարկվում են մի շարք առաջադրանքներ: Առաջադրանքների մի մասը նպատակաուղղված է զարգացնելու ուշադրությունը տեքստում գործածված բառերի նկատմամբ: Երեխաներն ընդգծում են կարևոր բառեր, դուրս են գրում դրանք, դատողություններ են անում այն մասին, թե ինչու է հեղինակն այդ բառերն օգտագործել տվյալ համատեքստում: Որոշում են, թե որ բառերն են բնութագրում հերոսներին և նրանց արարքները:Օրինակ՝ կարելի է այս դեպքում կիրառել «Կանգնեցրու ավտոբուս» խաղը:

Ինչպես նշում է Ա. Տեր-Գրիգորյանը, բնագրի ընկալմանը նպաստող մյուս կարևոր աշխատանքը երեխայի հասկացածի և չհասկացածի միջև սահմանի ճշգրտումն է [6, էջ 185]: Այսինքն՝ երեխան պետք է կարողանա ինքն իր համար պարզել, թե ինչն է հասկացել և ինչը՝ ոչ: Կարդալուց հետո ուսուցչի անմիջական հարցադրումը՝ «Իսկ ի՞նչն է քեզ անհասկանալի տեքստում», կարող է աշակերտին

դրդել դատողություններ անելու, որը հետապնդում է տեքստի բովանդակության առավել խոր ընկալման նպատակ:

Ռուսական մեթոդիկայում ընդունվել և մեծ տարածում է գտել տեքստի ընկալմանը նպաստող հնարներից **վերնագրի իմաստի ըմբռնումը** [15]: Վերնագիրն արտացոլում է ստեղծագործության բուն էությունը, և այն կարող է դիտարկվել որպես տեքստի ընկալմանը նպաստող յուրօրինակ բանալի:Գոյություն ունեն վերնագրի իմաստի ընկալման երեք փուլ.




**Վերնագրի ընտրություն տրված տարբերակներից և դրա համապատասխանեցում տեքստի բովանդակությանը**: Այս առաջադրանքը կատարվում է հետևյալ հերթականությամբ. սկզբում ընթերցել տեքստը, իսկ հետո պատասխանել բովանդակության շուրջ տրված հարցերին, ապա ընթերցել վերնագրերը: Սովորողները պետք է մտորեն և գտնեն, թե դրանցից որն է ավելի շատ համապատասխանում և ինչու, ապա ստուգեն իրենց ընտրությունը տեքստի վերընթերցմամբ:

***Տեքստի բովանդակությանը համապատասխան վերնագրի հորինում***: Վերնագրի շուրջ աշխատանքը սերտորեն առնչվում է սովորողների կապակցված խոսքի ուսուցման աշխատանքին, ինչը ներառում է թեմային, տեքստի կառուցվածքին, հիմնական ասելիքին, ոճին վերաբերող և այլ բնույթի հարցեր:

Կրտսեր դպրոցականների համար «Վերնագրի՛ր տեքստը» առաջադրանքը ծառայում է ամենից առաջ տեքստի իմաստի բացահայտմանը և ընթերցածի ընկալման ստուգմանը:

Այսպիսով, մինչ բնագրի շուրջ աշխատանքը ենթադրվում է այնպիսի առաջադրանքների կատարում, որոնք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ տեքստի

լիարժեք ընկալման համար. տեքստի հետ աշխատանքը դասավանդման ժամանակակից մեթոդաբանության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում: **Օրինակ՝ իմ պլանավորած և վարած դասերից 3-րդ դասարանում՝ «Բա՛ց արա թեր-թերդ,տեսնենք հրաշքներդ» թեմատիկ խմբի շրջանակում:** Թեմատիկ խմբում ներառված են տասը հետաքրքիր դասանյութեր, որոնցից յուրաքանչյուրն ուղղված է աշակերտների մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը, լեզվամտածողության,գրագիտության,տրամաբանությանաշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծմանը, աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումանը, բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորմանը, բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությանը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորմանը:

Թեման սկսվում է «Կաթիլը» դասանյութով, որտեղ ներկայացվում է բնության մի փոքրիկ մասնիկի՝կաթիլի շրջապտույտն ու փոխակերպումը: Այսպիսով, դասանյութի միջոցով աշակերտները վերհիշում են տարվա եղանակներն ու դրանց հատուկ բնական երևույթները, տեղեկություններ են ստանում ջրի և ջրի շրջապտույտի մասին: Որպես լեզվաքերականական նյութաշակերտներն ամրապնդում են բառերի տեսակների (պարզ, բարդ, ածանցավոր) մասին ունեցած գիտելիքները, զարգացնում բառապաշարն ու ճիշտ խոսելու կարողությունները: Եվ

ամենակարևորը աշակերտները գիտակցում են, որ ջրի ամեն մի կաթիլը կարևոր է:

**Դասարան՝** 3

**Դասի լայն թեման՝** «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ»

**Դասի նեղ թեման՝** «Արջի և վարազի կռիվը»[1]

**Դասի տեսակը՝** նոր նյութի հաղորդման դաս

**Դասի նպատակները՝**

- ամրապնդել սահուն և արտահայտիչ կարդալու կարողությունը,
- կռահել բնագրի գլխավոր գաղափարը,
- բնութագրել հերոսներին և նրանց կատարած արարքները:

**Դասի խնդիրները՝**

- ընթերցել բնագիրը,
- ձևավորել ստեղծագործության հիմնական միտքը որոշելու և այդ ընտրությունը ինքնուրույն մեկնաբանելու կարողությունը,
- համեմատել բնագրում հանդես եկող կերպարներին, վերլուծել նրանց կատարած արարքները,
- ամփոփել դասը:

**Դասի վերջնարդյունքները՝**

Դասի ավարտին աշակերտները՝

- Կամրապնդեն սահուն և արտահայտիչ կարդալու կարողությունը:
- Կկռահեն բնագրի գլխավոր գաղափարը, կբնութագրեն հերոսներին և նրանց կատարած արարքները:
- Կձևավորեն ստեղծագործության հիմնական միտքը որոշելու և այդ ընտրությունը ինքնուրույն մեկնաբանելու կարողությունը:

[1]Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Եր., 2014, էջ 39:

**Խթանման փուլ**

Խթանման փուլը սկսեցինք թեմատիկ խմբի վերնագրի հիշեցմամբ:

- Ո՞ր թեմատիկ խումբն ենք ուսումնասիրում:

Աշակերտները պատասխանեցին.

- «Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ»:
- Ի՞նչ դասեր ենք անցել այս թեմատիկ խմբի ուսումնասիրության ընթացքում:
- «Կաթիլը» և «Անտառի բնակիչները»:
- Ինչո՞ւ են այս թեմանները ընդգրկված միևնույն թեմատիկ խմբում:
- Քանի որ այս թեմանները բնության մասին են:

Այս աշխատանքով մենք ապահովում ենք դասի նախապատրաստական փուլը:

**Իմաստի ընկալման փուլ**

Այս փուլումփորձեցի հարցադրումների միջոցով հասնել այն արդյունքին, որ աշակերտները վերնագրի և նկարի միջոցով գուշակեին տեքստի բովանդակությունը:

- Ո՞րն է մեր նոր դասի վերնագիրը («Արջի և վարազի կռիվը»):
- Նայելով նկարին և կարդալով վերնագիրը՝ ի՞նչ եք կարծում, ինչի՞ մասին կարող է լինել նոր դասը (Նոր դասը կարող է լինել որսորդության մասին, ինչպես նաև վերնագիրը կարդալով՝ կարող ենք ասել, որ դասը արջի և վարազի կռվի մասին է):

- ❖ Նոր նյութի հաղորդման խնդիրներից էր ստեղծագործության հիմնական միտքը որոշելը և այդ ընտրությունը մեկնաբանելը: Այդ իսկ պատճառով էլ հանձնարարեցինք բնագրի առաջին հատվածը մեկ անգամ մտքում կարդալ և փորձել վեր հանել բնագրի հիմնական միտքը: Ապա, օգտվելով հարց ու պատասխան մեթոդական հնարից, փորձեցի պարզել՝ ի՛նչ են հասկացել աշակերտները բնագրից:

**Հարց ու պատասխան՝**

- Ինչի՞ մասին էր բնագրի առաջին հատվածը:

- Առաջին հատվածը որսորդության ժամանակ կատարված մի դեպքի մասին էր, որի ականատեսն էր եղել որսորդը:

- Ձեր կատարած ենթադրությունները ճի՞շտ էին:

- Ճիշտ էին այնքանով, որ նոր դասը վերաբերում էր որսորդությանը:

- Հարց ու պատասխանը ավարտելուց հետո հանձնարարեցինք բնագրի առաջին հատվածը ինքնուրույն բաժանել տրամաբանական հատվածների: Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո աշակերտներին ուղղեցինք հարցեր տվյալ հատվածի վերաբերյալ: Այսպիսով՝ կատարեցինք աշխատանք վերնագրի և նկարագրման շուրջ, որը աշակերտներին ստիպեց մտածել և երևակայել, ինչպես նաև կատարեցինք բնագրի առաջին հատվածի լուռ ընթերցանություն, որը համապատասխանում է կարդացած ստեղծագործության շուրջ աշխատանքի բնագրի ընթերցում հատվածին:

**Առաջին հատված՝**

- Ո՞ր անտառն է նկարագրում հեղինակը (Խոսրովի անտառը):

- Ինչպիսի՞ն էր Խոսրովի անտառը (Խոսրովի անտառը հարուստ էր վայրի մրգերով և նրա թավուտներում վխտում էին արջերն ու վարազները):

- Ո՞վ պատմեց զարմանալի դեպք (Ընկերներից մեկը):

- Ծառի հետևում թաքնված՝ ինչի՞ն էր սպասում որսորդը (Սպասում էր, որ վայրի խոզերից մեկնումեկը երևա):

- Ի՞նչ տեսավ արջը՝ ժայռի գլխից ցած նայելով (Արջը տեսավ, որ այնտեղ վայրի խոզեր կային իրենց ձագերով):

**Երկրորդ հատված՝**

- Ինչո՞ւ որսորդը լռեց (Որսորդը լռեց, քանի որ վախեցել էր):

- Ինչ տեսավ որսորդը (Որսորդը տեսավ, որ արջը գնաց, մի փոքրիկ գերան վերցրեց ու, երկու ոտքերի վրա անճոռնի քայլելով, վերադարձավ դեպի ժայռը):

- Ինչո՞ւ որսորդը չկրակեց (Որսորդը չկրակեց, քանի որ հետաքրքրությունը շատ մեծ էր, և ցանկանում էր տեսնել՝ ի՛նչ է անելու արջը):

**Երրորդ հատված՝**

- Արջը գերանը որտե՞ղ դրեց (Արջը գերանի մի ծայրը դրեց գետնին, մյուսը՝ ծառի բների արանքը):

- Գերանը դնելուց հետո ի՞նչ արեց արջը (Գերանը դնելուց հետո գնաց ժայռի կողմը, այնտեղից վազելով եկավ մագլցեց գերանով):

- Ինչո՞ւ վայր ընկավ արջը (Արջը վայր ընկավ, քանի որ սայթաքեց):

- Ըստ որսորդի՝ ինչպիսի՞ տեսարան էր (Շատ ծիծաղաշարժ տեսարան էր):

❖ Հատվածաբար ընթերցելուց հետո անդրադարձանք ստեղծագործության առաջին հատվածի հիմնական գաղափարին: Աշակերտներից մի քանիսը ասացին, թե ո՛րն է ստեղծագորղության առաջին հատվածի հիմնական գաղափարը և փորձեցին մեկնաբանել իրենց կարծիքը:

Աշակերտները նշեցին՝

1. Ստեղծագործության առաջին հատվածը այն մասին էր, թե ինչպե՛ս է որսորդը ականատես եղել արջի կատարած արարքներին, ինչպե՛ս է արջը փորձել իր համար ելարան պատրաստել:

2. Ստեղծագործության առաջին հատվածում նկարագրվում էր Խոսրովի անտառը և արջի կատարած գործողությունները:

3. Ստեղծագործության առաջին հատվածը Խոսրովի անտառում տեղի ունեցած դեպքի մասին էր, որի ականատես էր եղել որսորդը: Ստեղծագործությունում հեղինակը ներկայացնում էր իր ընկերներից մեկի՝ որսորդի որսի ժամանակ կատարված դեպքը:

❖ Շարունակեցինք բնագրի շուրջ աշխատանքը՝ բառային աշխատանք կատարելով: Աշակերտներին հանձնարարեցինք ստեղծագործության առաջին հատվածից դուրս գրել իրենց համար ուղղագրական արժեք ներկայացնող և բացատրության կարիք ունեցող բառերը: Բառերը գրեցի գրատախտակին և բացատրեցի:

**Ուղղագրական արժեք ունեցող բառեր՝**

Վխտալ – գրվում է խ – ով:

Հանկարծ – գրվում է ծ – ով:

Փորսող – գրվում է ղ – ով, քանի որ սող արմատն է:

Կընկներ – գրվում է ը – ով, քանի որ ընկն(ել) արմատն է:

Թաքստոց – գրվում է ք – ով, քանի որ թաք արմատն է:

Մագլցել – գրվում է գ – ով:

Մռթմռթալ – գրվում է ռ – ով, քանի որ արմատի կրկնություն է:

Սայթաքել – գրվում է ք – ով:

**Բացատրության կարիք ունեցող բառեր՝**

Վխտալ – մեծ բազմությամբ մի տեղ շարժվել, ման գալ:

Փորսող տալ – փորը գետնին քսելով սողալ:

Թաքստոց – թաքնվելու տեղ:

Անճոռնի – խիստ տգեղ:

Մագլցել – բարձրանալ:

Ելարան – ելնելու հարմարանք, սանդուղք:

Սայթաքել – ոտքը սահել:

- Հարց ու պատասխանից հետո կատարեցինք բառային աշխատանք՝ բացատրելով անհասկանալի և ուղղագրական արժեք ունեցող բառերը:

**Կշռադատման փուլ**

Այս փուլում աշակերտներին հանձնարարեցի մի քանի նախադասությամբ փորձել գուշակել՝ ի՛նչ կլինի հետո արջի հետ, և ինչպե՛ս կավարտվի ստեղծագործությունը: Այս աշխատանքով էլ ամփոփեցինք դասը:

Դասի թեման՝«Արջի և վարազի կռիվը» պատմությունը ուսուցանելիս կշռադատման փուլում կարող ենք կիրառել «Ի՞նչ կփոխեիք արդյոք և ինչու՞» մեթոդական հնարը, որի նպտակն է, հասկանալ, թե ինչպես են մտածում երեխաները: Դասարանը կբաժանենք խմբերի և գրատախտակին կգրենք ուղղորդող հարցեր, օրինակ՝ ինչպե՞ս կուզենաիք ավարտվեր պատմությունը, ինչը ձեզ ամենից շատ հուզեց, ճիշտ վարվեց արդյո՞ք որսորդը և ի՞նչ կփոխեիք դուք այս պատմության մեջ:

Խմբերի անդամները միասին քննարկում են հարցերի պատասխանները և որոշում, թե ինչ կփոխեին իրենք այս պտմության մեջ: Այնուհետև խմբերը հերթով բարձրաձայն ասում են իրենց կարծիքը և ուսուցչի օգնությամբ, քննարկում և վերլուծում են յուրաքանչյուր խմբի միտքը՝ համեմատելով հեղինակի վերջաբանի հետ: Մեկնաբանություն՝այսաշխատանքը նպաստում է աշակերտների կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը:

Նմանատիպ բազմաշերտ աշխատանքներ կարող ենք իրականացնել նաև չափածո ստեղծագործությունների շուրջ աշխատելիս: Օրինակ՝Հ. Սահյանի«Գարուն է գալիս» բանաստեղծության ուսուցման ժամանակ խթանման փուլում կարող ենք կիրառել «Կարո՞ղ ես գուշակել» մեթոդական հնարը, որի ընթացքում դասարանը կբաժանենք երեք խմբի.առաջին խմբին կասենք հանելուկ գարնան մասին, երկրորդ խմբին կհանձնարարենք դիտել նախօրոք պատրաստված նկարազարդում գարնան մասին և կռահել, թե ինչի մասին է, իսկ երրորդ խումբը արդեն կմեկնաբանի բանաստեղծության վերնագիրը: Այսպիսով՝ աշակերտներին կդրամադրենք դասին և կներգրավվենք ակտիվ գործունեության մեջ:

Երրորդ դասարանի «Երեք հարուստ» առակը ուսումնասիրելիս կշռադատման փուլում կարող ենք կիրառել «Բեմադրում ենք պատմությունը» մեթոդական հնարը: Մեթոդի կիրառման նպատակն է, որ նախ աշակերտները ուշադիր կարդան իրենց տեքստը, քննարկեն,կատարեն բառային աշխատանք, փորձեն հասկանան գաղափարը

և կշռադատման փուլումբեմադրեն առակը։Նպատակն է աշակերտներին ներգրավվել դերային խաղում, որպեսզի զարգացնենք աշակերտների ուշադրությունը, կամքը և, որպեսզի առակը էլ ավելի լավ տպավորություն ունենա։ «Կարկուտը» ստեղծագործության ուսումնասիրումը կարող ենք իրականացնել «Արդյոք ճիշտ է, թե սխալ» մեթոդական մեթոդը։ Այս մեթոդը նպատակահարմար կլինի կիրառել դասի իմաստավորման փուլում, երբ սովորողները ծանոթացաթ կլինեն բնագրի գաղափարին։ Նախապատրաստում դասարանը բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբի տալ մեկ ծրար, որի մեջ եղա հարցերին աշակերտները պետք է պատասխանեն ճիշտ է, թե սխալ։ Հարցերը պետք է մոտավոր լինեն այսպիսին՝ երեխաներ ձեր կարծիքով ճիշտ է, որ կարկուտը կարող է ցավեցնել անձրևոցին կամ տանիքին։ Ճիշտ վարվեց արջուկը՝ նախատելով իշուկին։ Աշակերտներին տրվում է ժամանակ, որից հետո խմբերը բարձրաձայն քննարկում են իրենց մտքերը, այսպիսով՝ նրանք կռահում են բնագրի գաղափարը։

Մայրենի դասերին կարևոր է ճիշտ մեթոդների ընտրությունն ու տեղին կիրառումը։ Այժմ մեզ հասանելի են անթիվ մեթոդներ՝ մտագրոհ, 5-րոպեանոց շարադրանք, Վեննի գծապատկեր, քառաբաժան, հնգյակ, ԳՈՒՍ, խճանկար, աշխատանք ուսումնական կենտրոններումն այլն։ Ցանկացած մեթոդով կամ տեխնոլոգիայով աշխատելու ժամանակ պետք է իրականացնել մանրակրկիտ և հետևողական աշխատանք նպատակին հասնելու և յուրաքանչյուր սովորողի վրա ազդեցություն թողնելու համար։

## Հարցախույզի արդյունքների վերլուծություն

Հիմք ընդունելով բնագրի շուրջ կատարվող աշխատանքը՝ անցկացրել եմ հարցախույզ՝ նպատակ ունենալով պարզել այդ աշխատանքի արդյունքում կրտսեր դպրոցականների գիտելիքների յուրացման և դրանք կիրառելու կարողությունների ձևավորման աստիճանը։

Հետազոտությունն իրականացրել ենք Արագածոտնի մարզի Վարդենուտի միջնակարգ և Արագած գյուղի միջնակարգ դպրոցներում դասավանդող 15 ուսուցիչների և 67 սովորողների հետ, ինչպես նաև կատարել ենք օնլայն հարցում, որին մասնակցել է 10 ուսուցիչ։ Ուսուցիչների հարցաթերթում ընդգրկված էր 5 հարց։

Հարցաշարի նպատակը տարրական դասարանների ուսուցիչների կարծիքի և վերաբերմունքի բացահայտումն է բնագրի շուրջ կատարվող աշխատանքներին և դրանց ուսումնասիրության առանձնահատկությունների ուսումնասիրության վերաբերյալ: Ուսումնասիրել ենք տարրական դպրոցում բնագրի ուսումնասիրման արդյունավետությունը բարձրացնող մոտեցումները:

Ձեր կարծիքը կօգնի՝ մշակելու ճիշտ և հասկանալով կարդալու սովորողների կարողությունը:

**Դասվարի համար նախատեսված հարցաթերթիկի վերլուծություն**

1. ***Ձեր կարծիքով՝ մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները մատչելի՞ են աշակերտների համար:***

☐ Այո՛, լիովին մատչելի են,

☐ Ո՛չ, մատչելի չեն:

***2. Բնագրի շուրջ աշխատելու ժամանակ ո՞ր փուլն եք ամենից շատ կարևորում, ուսումնականության ընկալումն ապահովելու համար: Համարակալե՛ք ըստ կարևորության (1-ից 6, 1 – ամենակարևոր):***

☐ զրույցը

☐ ընթերցումը

☐ բառային աշխատանքը

☐ քննարկումը

☐ վերարտադրումը

☐ ամփոփումը




3. *Մայրենիի դասագրքերում զետեղված ո՞ր ստեղծագործություններն են աշակերտներն ավելի սիրով կարդում:*

- ☐ հեքիաթը
- ☐ պատմվածքը
- ☐ բանաստեղծությունը
- ☐ առակը




**4. Ի՞նչ մեթոդներ և մեթոդական հնարներ եք կիրառում բնագրի գաղափարի բացահայտման նպատակով:**




***5. Ի՞նչ եք կարծում՝ բնագրերի ուսումնասիրումը արդյո՞ք ազդում է աշակերտների կրթադաստիարակչական գործընթացին, արժեհամակարգի ձևավորմանը:***




## Աշակերտներին տրված հարցաթերթի վերլուծություն

1. *Քո կարծիքով՝ մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները մատչելի՞ են:*

   ☐ Հիմնականում մատչելի են:

   ☐ Հիմնականում մատչելի չեն:




2. *Քո մայրենիի դասագրքում զետեղված ստեղծագործություններից որո՞նք են ամենալավը:*

   ☐ հեքիաթը

   ☐ պատմվածքը

   ☐ բանաստեղծությունը

   ☐ առակը




3. *Ինչի՞ մասին ես սիրում կարդալ ամենից շատ:*




*4. Այս ուսումնական տարում «Մայրենի 3» դասագրքից կարդացած թեմատիկ խմբերից, որն է ամենից շատ դուր եկել քեզ:*




Փաստորեն ամենից շատ երեխաներին դուր է եկել «Ժողովրդն իմաստուն է» թեմատիկ խումբը, որովհետև այդտեղ առակներ էին, իսկ իրենք շատ-շատ են սիրում առակներ, ինչպես նաև այդտեղ կար «Ժողովուրդը ծիծաղում է» բաժինը, որը իրենց շատ է զվարճացրել:

*5. Կարողանու՞մ ես կռահել կարդացած ստեղծագործության գաղափարը: Ի՞նչն է օգնում քեզ այդ հարցում:*



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի վերաբերյալ գրականության ուսումնասիրումը, ինչպես նաև հետազոտությունների ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Տարրական դասարաններում աշակերտի խոսքի մշակույթի ձևավորման և զարգացման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել առանձահատուկ աշխատանքներ:
2. Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման նպատակով բառապաշարի հարստացմանն ուղղված բազմաշերտ վերլուծությունը պետք է իրականացնել բնագրի շուրջ աշխատանքի ժամանակ:
3. Սովորողների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները պետք է իրականցնել ոչ միայն դասագրքի բնագրերի և դրանց կից տրված աշխատանքների միջոցով, այլև էլեկտրոնային խաղերի ու առաջադրանքների կիրառմամբ:
4. Բնագրի շուրջ աշխատանքը կարելի է համարել լիարժեք, երբ սովորողները, առաջնորդվելով հուշում – ուղեցույցներով, հասկանան բնագրի բովանդակությունը, խորությամբ ընկալեն հիմնական գաղափարը, կռահեն ենթատեքստը, ինչպես նաև իրենց խոսքում տեղին կիրառեն նորածանոթ բառերն ու արտահայտությունները:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աբրահամյան Ա., Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Աղբյուր, Դասագիրք - տետր նախադպրոցականների համար, Ե.- 2010, 160 էջ:
2. Բալայան Ա., Բառատետր - բառարան 2-4-րդ դասարանների համար, Ե.- «Զանգակ» հր.- 2014, 48 էջ:
3. Անափիոսյան Ա., Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, 2012թ. , www.osf.am, 12.01.2019:
4. Բալայան Ա., Լեզվական հասկացությունների ուսուցման հավաքածու, Ե.- «Զանգակ» հր., 2007:
5. Բալայան Ա., Մկրտչյան Ս., Ամառային տետր. շուտով կգնամ 2-րդ դասարան, Երևան, «Զանգակ» հր., 2014:
6. Բալայան Ա. և ուրիշներ, Քրեստոմատիա 2-4-րդ դասարանների համար, Հրազդան, «Նարպրինտ» հր., 2014:
7. Բալայան Ա., 100 խաղ դպրոցականների համար, Ե.- «Զանգակ-97» հր., 2005:
8. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գիրք - տետր 2, Ե.- «Էդիթ պրինտ» հր.- 2009:
9. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա.- «Զանգակ» հր., Ե.- 2018, 316 էջ:
10. Հանրակրթության պետական չափորոշիչ, armedu.am, 29.08.2011:
11. Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք.- Ե., 2016, էջ 180:
12. Новикова С.А. Работа с текстом в начальной школе: *snovikova2010.narod.ru/happy_birsday/rabota_s_tekstom.pdf, 15.08.2018.*
13. Ушинский К.Д. - родоначальник метода объяснительного чтения: helpiks.org, 20.03.2019.